ներ էին, որոնց չէր հանդուրժել հին եկեղեցին և վտարել ու բանտարկել էր։ Դիոսկորոսը համարձակ կերպով առաջ էր քաշում դրանց, բայց Հայաստանի հոգևորականությունը ինչպես Անիում, այնպես էլ գավառներում խիստ ուժեղ էր և չէր ընդունում ոչ միայն կաթողիկոսի, այլև թագավորի ու իշխանների կարգադրությունները։ Դեռ ավելին, հոգևորականությունը նզովեց և եկեղեցուց դուրս հայտարարեց թագավորին և իշխաններին։ Այդ աշխարհիկ ու հոգևոր ֆեոդալների ներքին պայքարի մեջ հաղթող դուրս եկավ հոգևորականությունը։ Եկեղեցին հաղթեց և այնուհետև տեսնում ենք, որ նա ավելի մեծ ուժ հանդիսացավ մանավանդ 11-րդ դարից հետո, երբ Հայաստանում հետզհետե տեղական թագավորությունները ոչնչացան և երկիրն անցավ օտար տիրապետությունների տակ։

Դիոսկորոսը, վերադառնալով Սանահին, մինչև իր մահն էլ իրեն հայրապետ էր համարում, և նրա անունով Սանահնում պահպանված երկու արձանագրությունները կաթողիկոսական հրամանի բնույթ ունեն։ Այդ արձանագրություններից մեկը պատկանում է 1061 թվականին, որով իշխանաց իշխան Շապուհիկը մի գյուղ է գնել և նվիրել Սանահնին (արձ. 105), իսկ մյուսը 1063 թվականն է կրում և վերաբերում է ս. Գրիգոր բոլորակ եկեղեցու և գրատան շինության՝ Հրանուշ թագուհու հրամանով (արձ. 179)։

Հենց այն, որ Դիոսկորոսի օրով է շինվել Սանահնի գրատունը և ծառայել է գրքերի և թանկարժեք առարկաների պահպանման, ցույց է տալիս նրա վերաբերմունքը դեպի գիրքն ու արվեստի նմուշները։ Ինքնին հասկանալի է, որ Դիոսկորոսի նախաձեռնությամբ ու ղեկավարությամբ է Հրանուշ թագուհին կառուցել տվել գրադարանի և բոլորակ եկեղեցու գողտրիկ շենքերը։

Չնայած այն բանին, որ Դիոսկորոսը իբրև կաթողիկոս մերժվեց և նրա քաղաքականությունը դատապարտվեց հայոց եկեղեցու կողմից, բայց և այնպես մեր հին մատենագիրները նրան մեծարել են Մեծն Դիոսկորոս, Մեծ հոետորն Դիոսկորոս (Մատթեոս Ուռհայեցի), այր սուրբ և առաքինի (Վարդան Վարդապետ) բառերով։ Ուռհայեցին, թվելով 11-րդ դարի հայոց լուսավոր վարդապետներին՝ Անանիա և Գրիգոր Նարեկացիների, Կոզեռնի, Լաստիվերտցու և մի քանի ուրիշների կողքին, նշում է նաև Դիոսկորոս Սանահնեցու անունը։

Դիոսկորոսը ոչ միայն մատենադարան է շինել Սանահնում, այլև վանքի համար ձեռագրեր է արտագրել տվել։ «Արարատ» ամսագրի 1901 թվականի 275 էջում Եր. Ս. ստորագրությամբ լույս տեսած հոդվածի հեղինակը քաղվածորեն մեջ է բերել էջմիածնի ձեռագրերի հիշատակարանները Դիոսկորոսի մասին, որոնցից մեկի մեջ ասված է՝

«Ընկալեալ զհրաման տեառն իմոյ հօր Դէոսկորոսի և հոգևոր վարդապետի՝ Սանահնի սուրբ ուխտի առաջնորդի, զոր յոյժ ըղձիւ և սիրական բաղձանօք հայցեալ պահանջեցեր ի մէնջ, վասն բացայայտութեան տէրունական բանից կենսարեր աւետարանին՝ համառօտաբար շարադրել զսրբոց վարդապետացն վերաճառութիւն, որք տեսութեամբ հոգւոյն, բացափայլեցին ի մեզ զլոյս գիտութեան և զծածկեալ խորհուրդ հոգւոյն, որ ի բազմաց զանխլաբար թաքչիւր...»[1]։

Դիոսկորոսը ոչ միայն ինքն է եղել գրասեր և զարկ է տվել ձեռագրերի բազմացման, այլև նա Սանահնի վանքում հավաքել էր ու աճեցրել միջնադարյան գիտնականների մի ամբողջ խումբ, որոնց մեջ ամենից շատ աչքի էին ընկնում Անանիա Սանահնեցին և Հակոբոս Սանահնեցին կամ Քարաքնեցին։

Դիոսկորոսի առաջնորդության ժամանակ մեծ գիտնականի և փիլիսոփայի անուն էր վաստակել Սանահնի վանքի միաբան Անանիան։ Նրա մասին Կիրակոս Գանձակեցին գրում է.

«Իսկ յԱրևելս արք անուանիք և գիտնականք լուսաւորիչք եկեղեցւոյ՝ Անանիա վարդապետ ի Սանահինն, յաւուրս Դիոսկորոսի, այր մտաւոր և հանճարեղ, գիտող տոմարական արհեստի, և աստուածային գրոց մեկնող»։

Այնուհետև Գանձակեցին գրում է, որ Անանիան Պետրոս Գետադարձի հրամանով գրել է Պողոս Առաքյալի շորեքտասան թղ-

[1] Եր. Ս. Հաղբատ և Սանահին վանքերը, «Արարատ», 1901, մայիս—հունիս, էջ 275։ Նույնը՝ Գարեգին Ա կաթողիկոս, Ցիշատակարանք ձեռագրաց, հատ. Ա, էջք 221—222, նաև էջ 1043։